

Մայրլ Ե. Սթոուն (Երուսաղեմ)

Իսրայելի գիտությունների ակադեմիայի անդամ

Խաչիկ Ա. Հարությունյան

Բանասիր. գիտ. թեկնածու

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաս առաջին: Սուրբ Հովհաննես ավետարանիչ եկեղեցին և նրա արձանագրությունները*

Բանալի բառեր-Երուսաղեմ, քրիստոնեություն, հայոց պատրիարքություն, սրբատեղիներ, վանքեր, ուխտավորներ, ձեռագիր, վիմագիր, հիշատակարան:

Մուտք

Հայերի մշտական ներկայությունը քրիստոնեության օջախ Երուսաղեմ քաղաքում և նրա մերձակայքում ունի ավելի քան 1700-ամյա պատմություն: Այդ ներկայությունն առաջին հերթին պայմանավորված է Դ դարի սկզբին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հանգամանքով, որին կարճ ժամանակ անց հաջորդել են հայ ուխտավորների այցելությունները Սուրբ երկրի սրբավայրեր¹:

Այդ մասին են վկայում ոչ միայն հայկական սկզբնաղբյուրները, վիմական բացառիկ արձանագրությունները, այլև օտար աղբյուրները: Պահպանվել և մեզ է հասել Անաստաս վարդապետ Հերապոլսեցու անունով հայտնի 2 դարավերջով թվագրվող մի գրավոր հուշարձան, որի հեղինակն ականատեսի աչքով անվանապես թվարկում է Սուրբ երկրում շուրջ յոթ տասնյակ հայ-

* «Վեմ» հանդեսի առաջիկա մի քանի համարներում ծրագրում ենք ներկայացնել Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարի տարբեր հատվածներում հայ ուխտավորների թողած արձանագրությունները, որոնք հավաքվել և մշակվում են «Սուրբ երկրի և Սինայի հայերեն արձանագրությունները» հետազոտական աշխատանքի շրջանակներում (ղեկավար **Մայրլ Սթոուն**): Հոդվածն ընդունվել է տպագրության 06.06.2020:

¹ Տե՛ս **Աղանունի Ս. եպս.**, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ երկրին մեջ. ուսումնասիրություններ, Երուսաղեմ, «Սրբոց Յակոբեանց» հրատ., 1931, էջ ԺԱ-ԺԹ, **Stone M. E.**, An Armenian Pilgrim to the Holy Land in the Early Byzantin Era, "Revue des Études Arméniennes", 1985, N 17, էջ 173-178, **Stone M. E.**, Holy Land Pilgrimage of Armenians before the Arab Conquest, "Revue Biblique", 1986, vol. 93, N 1, էջ 93-110, **Thomson R. W.**, A Seventh-Century Armenian Pilgrim on Mount Tabor, "Journal of Theological Studies", 1967, N 18, էջ 27-33 և այլն:

կական սրբատեղիներ. դրանցից մի քանիսի շինությունը հեղինակը վերագրում է անգամ հայոց Տրդատ թագավորին և Գրիգոր Լուսավորչին²: Ե-Չ դդ. Երուսաղեմում և նրա մերձակայքում հայ ուխտավորների ու վանականների ներկայության մասին մեծարժեք տեղեկություններ է հայտնում նաև պաղեստինցի նշանավոր վանական Կյուրեղ Սկյութապոլսեցին³: Ըստ որում՝ դրանք ոչ թե հարևանցի արված դիտարկումներ են, այլ ազգությամբ հայ վանականների և նրանցից մի քանիսի գործունեության բավական հանգամանալի հիշատակումներ⁴:

Հայոց ներկայության մասին առավել քան խոսում են Երուսաղեմում և Սուրբ երկրի տարբեր սրբատեղիներ տանող ճանապարհներին հայտնաբերված և Ե-Է դարերով թվագրվող հայերեն բազմաթիվ արձանագրությունները: Մենք նկատի ունենք առաջին հերթին Չ-Է դարերով թվագրվող Երուսաղեմի հայկական խճանկարային եզակի արձանագրությունները⁵, ինչպես նաև Նազարեթում ու Մինայում գտնված և Ե դարով թվագրվող հայերեն գրությունները⁶, որոնք ոչ միայն փաստում են հայոց ներկայությունն այդ վայրերում, այլև բուն Հայաստանից դուրս հայոց գրի հնագույն վկայություններն են:

Հնագույն շրջանի այս արձանագրությունների առկայությունը կարևորվում է նաև այն առումով, որ այստեղ ստեղծված և բնօրինակով մեզ հասած գրավոր մյուս հուշարձանները, մասնավորապես ձեռագիր մատյանները, համեմատաբար ուշ շրջանից են: Բավական է նկատել, որ տեղում գրված և մեզ հասած թվա-

2 Տե՛ս Անաստաս վարդապետ Հերապոլսեցի, Վասն վանորդեց, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղեմ, բնագիրը կազմեց՝ **Չորսնեան Պ.**, «Մատենագիրք Հայոց», հատ. Ե., է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1276: Անաստաս վարդապետի և նրա ցուցակի մասին մանրամասն տես **Չորսնյան Պ.**, Անաստաս վարդապետի կազմած Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակի ժամանակի հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2001, N 1, էջ 27-46, տես նաև ցանկի անգլերեն թարգմանությունը՝ **Sanjian A. K.**, Anastas vardapet's List of Armenian Monasteries in seventh-century Jerusalem. A critical Examination, "Le Muséon", 1969, N 82, էջ 265-292:

3 Սավվալանյանցը հավանական է համարում, որ Տրդատը Երուսաղեմում վանքեր է կառուցել (տես **Սալավանյանց Տ. Հ. Թ.**, Պատմութիւն Երուսաղեմի, գրաբար բնագրին աշխարհաբարի վերածեց **Նշանեան Ս. Եսյս.**, հատ. Ա., Երուսաղեմ, «Սրբոց Յակոբեանց» հրատ., 1931, էջ 212-214): Նկատենք, որ Աղավունունի իր հերթին քիչ հավանական է համարում այն, որ Անաստաս վարդապետի նշած վանքերն ու եկեղեցիները Տրդատի կամ Գր. Լուսավորչի հետ առնչություն ունեցած լինեն (տես **Աղավունունի Ս. Եսյս.**, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ. ուսումնասիրութիւններ, էջ ԺԹ):

4 Տե՛ս **Ղազարեան Գ.**, Կիւրեղ Սկիթապոլսեցու տեղեկութիւնները Ե-Չ. դարերի Պաղեստինի հայ վանականների մասին, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուք, 2019, էջ 47-56:

5 Այստեղ, օրինակ, մանրամասն խոսվում է ազգությամբ հայ Եվթիմիոս Մեծի մասին, որը Պաղեստինում վանականության նախակարապետներից է եղել (տես նույն տեղում, էջ 48-49):

6 Տե՛ս **Յովսէփեան Վ. Վրդ.**, Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, մասն Գ., Քարտեղ հայ հնագրութեան (հայ գրի գիւտի 1500 ամեակի առթիւ), 95 տախտակով, Վաղարշապատ, Ելեքտրաշարժ տպ. Ս. Էջմիածնի, 1913, էջ 5, **Սթոուն Մ.**, Երուսաղեմի նորագյուտ հայերեն արձանագրությունները, «Պատմա-բանասիրական հանդէս», Եր., 1993, N 1-2, էջ 15-26: Նյութի վերաբերյալ տես նաև վերջին հրատարակությունը՝ **Tchekhanovets Y.**, The Caucasian Archaeology of the Holy Land: Armenian, Georgian and Albanian Communities between the Fourth and Eleventh Centuries CE, Brill, Leiden | Boston, 2018, էջ 41-136:

6 Տե՛ս **Սթոուն Մ. Ե.**, Հինգերորդ դարու հայերեն վիճագրություններ Նազարեթն, «Պատմա-բանասիրական հանդէս», Եր., 1990, N 3, էջ 52-62, **Stone M. E.**, Armenian Inscriptions of the Fifth Century from Nazareth, "Revue des Études Arméniennes", 1990-1991, N 22, էջ 315-322, **Stone M. E.**, The Armenian Inscriptions from the Sinai with Appendixes on the Georgian and Latin Inscriptions by **M. van Esbroeck** and **W. Adler**, Harvard Armenian Texts and Studies, 6, Cambridge, MA, 1982:

կիր հնագույն ձեռագիրը 1215 թ. Հովհան գրչի ընդօրինակած «Ճառընտիրն» է, որն այսօր պահվում է Մխիթարյան հայրերի վենետիկյան մատենադարանում: Հովհան (Յովան) գրիչն այն ընդօրինակել է «յաշխարհս Պաղեստին՝ ի մեջ գերութեանս Երուսաղեմի, ընդ հովանեաւ Սուրբ Յակովբայ առաքելական այթոռոյս» ոմն Հովհաննես կրոնավորի և նրա քրոջ՝ Տիկներեսի պատվերով⁷:

Դեպի տնօրինական սրբավայրեր ուխտագնաց խմբերի մի մասը մշտական բնակություն է հաստատել քաղաքում և նրա մերձակայքում՝ միաժամանակ դառնալով տեղի հայկական համայնքի կորիզը, որն աստիճանաբար պետք է վերածվեր ինքնուրույն պատրիարքության և հավասար դիտվեր տեղի մյուս եկեղեցիներին: Եվ ինչպես ճշմարիտ կերպով նկատել է պատմաբան Աշոտ Աբրահամյանը, Երուսաղեմի հայկական գաղթօջախը հայրենիքից դուրս հայոց հնագույն համայնքներից է և գերազանցապես ձևավորվել է տեղում բնակություն հաստատել ցանկացող ուխտավորների կամ միաբանների շնորհիվ և ոչ հարկադիր գաղթական հոսանքների հետևանքով⁸: Հնագիտական աշխատանքները և վերջին տարիներին կատարված պեղումները կրկին լրացնում ու հաստատում են այս տվյալները⁹:

Սույն հոդվածի նպատակից դուրս է Սուրբ երկրի պատմական, քաղաքական իրադարձությունների և դրանց առնչվող մանրամասների քննությունը: Նկատենք միայն, որ ուխտավորների հոսքը դարերի ընթացքում անընդմեջ շարունակվել է՝ անկախ Սուրբ երկրում տիրող քաղաքական իրավիճակից, որն ինչպես անցյալում, այնպես էլ այսօր լի է բազում հակասություններով՝ հղի ներքին և արտաքին վտանգներով: Հասարակ ուխտավորի համար քաղաքի է եղել այցելել տնօրինական սրբավայրերը, աղոթել դրանցում: Նրանցից շատերը տարբեր նվիրատվություններ են արել այդ սրբավայրերին, ոմանք էլ միայն իրենց անուններն են փորագրել սրբավայրերի զանազան անկյուններում՝ հիշատակված լինելու ակնկալիքով¹⁰: Այդ է պատճառը, որ տվյալ վայրերի այցելուներն այսօր անգնե աչքով կարող են նկատել տարբեր լեզուներով թողնված ընդարձակ և վայելույշ գրություններից մինչև պարզ ու քերծումով արված անվարժ գրությունները:

Այդ արձանագրությունների մեջ իրենց առատությամբ աչքի են ընկնում հայատառ գրությունները: Անցյալում արվել են դրանց հավաքման որոշ փոր-

7 Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանցի Վենետիկ, հատ. Բ, յօրինեց **հայր Բարսեղ վարդապետ Սարգիսեան**, Վենետիկ, 1924, էջ 133-146:
 8 Տե՛ս **Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., Հայպետհրատ, 1964, էջ 264, տե՛ս նաև Պատմություն հայ գաղթականության. Հայերու ցրուումը աշխարհի զանազան մասերը (սկիզբն մինչեւ ԺԱ. դար Քրիստոսի), գրեց **Ալաջաձեան Ա.**, Գահիրե, տպ. «Սահակ Մետրոպ», 1941, էջ 140-143:
 9 Տե՛ս **Tchekhanovets Y.**, նշվ. աշխ., էջ 41-107:
 10 Քրիստոնյա աշխարհում հիշատակված լինելու ակնկալիքի, սպասումների և ընդհանրապես այդ գաղափարի մասին տե՛ս **Պետրոսյան Հ.**, Խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը, «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, 6, «Մետրոպ արք. Աշճեան մատենաշար», Եր., 2005, էջ 195-215, տե՛ս նաև **Հարությունյան Խ. Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Եր., «Մատենադարան», 2019, էջ 277-286, 318-331:

ձեր, և այսօր մեր ձեռքի տակ է Երուսաղեմի պատմության քաջագիտակ Տիգրան Սավալանյանցի արժեքավոր աշխատությունը, որը գրաբարից աշխարհաբար է փոխադրել Մեսրոպ Եպիսկոպոս Նշանյանը՝ աշխատության վերջում հավելելով մեծաթիվ նոր արձանագրություններ¹¹: Չգալի թվով արձանագրություններ է հավաքել նաև Մկրտիչ Եպիսկոպոս Աղավնունին, որոնք ներկայացրել է հիմնականում Սրբոց Հակոբյանց միաբաններին և դարերի ընթացքում Սուրբ երկիր այցելած գանազան անձանց անդրադառնալու առիթով¹²: Կան նաև առանձին հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնցում մասնակիորեն ներկայացված են տարբեր սրբավայրերի հայերեն գրությունները¹³:

Անցյալ դարի 70-ական թվականներից Երուսաղեմի Եբրայական համալսարանի հովանու ներքո ստեղծվել է նաև «Սուրբ երկրի արձանագրությունների առցանց շտեմարան», որում, ի թիվս բազմաթիվ լեզուներով արձանագրությունների, առատորեն ներկայացված են նաև հայերեն արձանագրությունները¹⁴: Սակայն պետք է ասել, որ առկա նյութը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս Սուրբ երկրում հայերեն գրությունների քանակի, տեղաբաշխման, բովանդակության և դրանց առնչվող այլ հարցերի վերաբերյալ: Ավելորդ չէ նշել նաև, որ հարյուրավոր արձանագրություններ դեռևս տեղ չեն գտել այլևայլ ուսումնասիրություններում և շարունակում են անտիպ մնալ: Դրանց մեծագույն մասը գտնվում է բացօթյա վայրերում և շատ հաճախ չի դիմանում ժամանակի փորձությանը. արձանագրությունն ընդունած քարերի որակը, բնակլիմայական պայմանները, հողմահարումները պատճառ են դառնում գրությունների քայքայմանն ու վերացմանը:

Այս նպատակով «Սուրբ երկրի և Սինայի հայերեն արձանագրությունները» ծրագրի շրջանակներում նախաձեռնել ենք հավաքել, մշակել և համապատասխան ծանոթագրություններով հրատարակության պատրաստել հավաքված նյութը: Ժողովածուում արձանագրությունները նախատեսում ենք ներկայացնել ըստ սրբավայրերի, որոնք կից ունենալու են նաև համառոտ տեղեկատվական ակնարկ:

Սուրբ Հարության տաճարը մեկն է հայերեն գրություններով հարուստ սրբավայրերից: Այդ գրություններն առավել հարմար է ներկայացնել ըստ տաճարի ներքին բաժանումների (վայրերի) և ժամանակագրական կարգով:

11 Տե՛ս **Սավալանյանց Տ. Հ. Թ.**, «Պատմութիւն Երուսաղեմի, գրաբար բնագրէն աշխարհաբարի վերածոց Նշանեան Ս. եպս., հատ. Բ., Երուսաղէմ, հրատ. «Սրբոց Յակոբեանց», 1931, էջ 1219-1304, 1374-1386: Արձանագրությունները գետեղված են երկրորդ հատորի վերջնամասում. Ս. եպս. Նշանյանի հավելումները տրված են աստղանիշով (*):

12 Տե՛ս **Աղավնունի Ս. եպս.**, Միաբանք եւ այցելութիւն հայ Երուսաղեմի, Երուսաղէմ, հրատ. «Սրբոց Յակոբեանց», 1929:

13 Տե՛ս, օրինակ, **Պուրճեքեան Բ. Վրդ.**, Հին խաչքարերու յայտնաբերում Սրբոց Յակոբեանց մայր տաճարին մէջ, «Սիրն», 2015, N 10-12, էջ 80-93, **Khatchadourian H., Basmadjian M.**, L'art des khatchkars: Les pierres à croix arméniennes d'Ispahan et de Jérusalem, Paris, "Geuthner", 2014, էջ 382-415:

14 Տե՛ս <http://rockinscriptions.huji.ac.il/site/index> (մուտք 01.06.2020):

1. Սուրբ Հարության տաճարի հայերեն արձանագրությունները.
ընդհանուր ակնարկ¹⁵

Սուրբ երկրի տնօրինական տեղերի մեջ առանձնանում է, իհարկե, Սուրբ Հարության տաճար-համալիրը, որն իր հերթին բաղկացած է մի շարք սրբատեղիներից: Դրանց թվում են Սուրբ Խաչափայտի գյուտի վայրը, Գողգոթա լեռը, Քրիստոսի գերեզմանը, որտեղ, ըստ ավանդության, խաչելությունից հետո տեղափոխվել է Քրիստոսի մարմինը և այլն: Տաճարը բավական ընդարձակ և ճարտարապետական բարդ պատկեր ունի: Տարբեր դարաշրջաններում այն փոփոխություններ է կրել ինչպես արտաքին տեսքի, այնպես էլ ներքին շինությունների առումով, որոնք պայմանավորված են եղել մի կողմից եկեղեցական իրավունքների, իսկ մյուս կողմից՝ Երուսաղեմում քաղաքական իշխանությունների փոփոխություններով: Չանց առնելով այդ մանրամասները՝ նկատենք, որ տաճարի ներկա արտաքին տեսքը և գլխավոր մուտքը որոշ փոփոխություններով հիմնականում ԺԳ դարից են¹⁶:

Հարության տաճարի տարբեր անկյուններում կարելի է նկատել զանազան լեզուներով, այդ թվում՝ հայերենով թողնված արձանագրություններ: Հայերեն գրությունները հանդիպում են ոչ միայն տաճարի հայկական սրբատեղիներում, այլև ընդհանուր համարվող վայրերում: Մեր հաշվարկով՝ այդ գրությունների ընդհանուր թիվը 150-ից ավելի է: Դրանց մի փոքր մասը հայտնի է արդեն տարբեր հրատարակություններից, և տվյալ արձանագրությունները ներկայացնելիս այդ մասին կնշվի, սակայն առավել մեծ թիվ են կազմում նորագյուտ կամ առաջին անգամ հրատարակվող արձանագրությունները: Դրանք մեզ ներկայանում են հիմնականում ազուցված խաչքարերի կամ գանազան փորագրությունների տեսքով: Որպես կանոն, արձանագրությունները սեղմ ծավալ ունեն, շատ հաճախ սահմանափակվում են մեկ անվամբ կամ նույնիսկ անվան մեկ-երկու տառերի փակագրումով: Երբեմն էլ հանդիպում են համեմատաբար ընդարձակ արձանագրություններ կամ անվարժ փորագրությամբ նախադասություններ:

15 Առիթն օգտագործելով՝ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Սուրբ Հարության տաճարի հայկական սրբատեղիների տեսուչ Սամուել ծայրագույն վարդապետ Աղոյանին տեղում աշխատելու թույլտվության համար: Աշխատանքի ընթացքում մեզ ամեն կերպ աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Սուրբ Հարության տաճարի միաբան սարկավագներ Դավիթ Սաֆարյանին, Արտակ Թաղևոսյանին, Գեղամ Անջուլյանին, ինչպես նաև Հայր Արքակին:

16 Տաճարի կառուցման և նրա ճարտարապետության վերաբերյալ կա հարուստ գրականություն, որին կարելի է ծանոթանալ վերջերս լույս տեսած հետևյալ արժեքավոր ժողովածուով՝ “Jerusalem. The Holy Sepulchre, Research and Investigations (2007-2011)”, edited by Tucci G., “Altralea Edizioni s.r.l.”, Firenze, 2019: Տե՛ս մասնավորապես ժողովածուի հետևյալ հոդվածը՝ Angeloni A., Pappalardo C., The Archeological and Historical context of the Basilica of the Holy Sepulchre in Jerusalem, էջ 25-45:

Հավաքված արձանագրությունները սույն հոդվածում ներկայացնում ենք ըստ իրենց գտնվելու վայրերի և ժամանակագրական կարգի: Ըստ այսմ՝ տաճարի գավիթ-բակում առաջին հայկական սրբատեղին, որտեղ մենք գրանցել ենք հայերեն գրություններ, Սուրբ Հովհաննես ավետարանիչ եկեղեցին է:

2. Սուրբ Հովհաննես ավետարանիչ եկեղեցին

Եկեղեցին գտնվում է Սուրբ Հարության տաճարի գավթի (բակի)՝ արևելյան մասում: Երուսաղեմի պատմության քաջագիտակ Հովհաննես Հաննա վարդապետը նշում է, որ մատուռը կառուցվել է ճիշտ այն վայրում, որտեղ, ավանդության համաձայն, կանգնած են եղել Հովհաննես ավետարանիչն ու Աստվածամայրը Քրիստոսի խաչելության ժամանակ (Հովհ. ԺԹ. 26-27)¹⁷:

Հայկական սկզբնաղբյուրներում եկեղեցու կառուցման թվականի մասին տեղեկություններ չկան: Տ. Սավալանյանցն իր «Պատմության» մեջ թարգմանաբար ներկայացնում է Երուսաղեմում հայոց իրավունքների վերահաստատման առիթով հայոց պատրիարք Աբրահամ Գ-ին (1180-1191) սուլթան Սալահեդդինի տված հրովարտակը, որում նշվում է նաև Սուրբ Հովհաննես եկեղեցին¹⁸: Մ. եպս. Աղավունին էլ, մատնացույց անելով Չ դարավերջով թվագրվող Անաստաս վարդապետի հայտնի «Վասն վանորէից» ցուցակում տեղ գտած Սուրբ Հովհաննեսի վանքը՝ Հարության տաճարին կից¹⁹, նշում է, որ այս եկեղեցին կառուցվել է խաչակրաց շրջանից շատ ավելի վաղ²⁰:

Այս փոքրիկ եկեղեցու մուտքը ձևավորված է հիմնական պատի երկու կողերից մոտ 40 սմ առաջ եկած երկու պյունների վրա նստած կամարով: Մեր որոնումները ցույց են տալիս, որ մուտքի այս հարդարանքը նորօրյա չէ. առնվազն ԺԵ դարավերջին այն ունեցել է մոտավորապես նույն տեսքը՝ հետագայում ենթարկվելով մասնակի փոփոխությունների: Այսպես, ԺԵ դարի գերմանացի ուղեգիր Բեռնհարդ վոն Բրեյդենբախի «Ուխտագնացությունը դեպի Սուրբ երկիր» (1486 թ.) աշխատության պատկերների շարքում կարելի է գտնել նաև Հարության տաճարի մուտքը պատկերող մի նկար, որի աջակողմյան մասում հստակ երևում է նաև Սուրբ Հովհաննեսի մուտքը²¹:

1631 թ. Գրիգոր Պարոն տեր Գանձակեցի պատրիարքի (1613-1645) կարգադրությամբ նորոգվել է եկեղեցին, և թերևս որոշ փոփոխություններ են արվել

17 Տես [Յովհաննես Հաննա վրդ.], Գիրք պատմութան սրբոյ եւ մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս եւ սրբոց տնօրինականաց տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Կ. Պոլիս, հրատ. «Յովհաննէսի եւ Պօղոսի», 1782, էջ 216:

18 Տես Սաւալանեանց Տ. Հ. Թ., Պատմութիւն Երուսաղէմի, հատ. Ա., էջ 410:

19 Տես Անաստաս վարդապետ Հերապոլեցի, նշվ. աշխ., էջ 1276:

20 Տես Աղւանունի Մ. եպս., Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ. ուսումնասիրութիւններ, էջ 432:

21 Տես Von Breydenbach B., Peregrinatio in Terram Sanctam, Mainz, 1486: Փորագրապատկերի հեղինակը հոլանդացի էրևարդ Ռոյվիկն է (Erhard Reuwich) (տե՛ս <http://digital.ub.uni-duesseldorf.de/ink/content/pageview/4194705>, մուտք 01.06.2020):

նաև մուտքի հարդարանքում²², իսկ 1849 թ.՝ Կիրակոս պատրիարքի (1846-1850) օրոք, մարմարյա քարերով վերանորոգվել և բարեկարգվել է եկեղեցու ներքը²³: Այս տեղեկությունները հաստատվում են մատուռի դռան վրա թողնված ԺՁ-ԺԹ դդ. արձանագրություններով, որոնց երբեմնի գոյության մասին հաղորդում է Տ. Մավախյանը²⁴:

Ներկայումս հիշյալ դուռը և արձանագրությունները բացակայում են²⁵. տեղադրված է նոր դուռ՝ զարդարված խաղողի ողկույզներով և նռենիներով: Դռան վերին մասում կա հետևյալ սեղմ արձանագրությունը. «Ս(ՈՒՐԲ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲԵՏԱՐԱՆԻՉ ԵԿԵԴԵՑԻ ՀԱՅՈՑ»: Մատուռի բարավորին էլ վերջին հիմնանորոգությունը հավաստող երկաթազիր արձանագրությունն է.

«ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԱԲ ՄԱՏՈՒՌՍ Ս.(ՈՒՐԲ) ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԲԵՏԱՐԱՆՉԻՆ Թ.(ՈՒԻՆ) Հ.(ԱՅՈՑ) ՌՆԼԱ (1982) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ(ԵԱՌՆ) Տ.(ԵԱՌՆ) ՎԱԶԳԵՆԱՅ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)ՍԻՆ ԱՄ.(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՑ. Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս.(ՈՒՐԲ) ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ՏԵԱՌՆ ԵՂԻՃԷԻ Ս.(ՐԲԱԶԱՆ) ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ»:



Սուրբ Հարության տաճարի գավիթ-բակը և Սուրբ Հովհաննես ավետարանիչ եկեղեցու մուտքը ԺԵ դարում և այսօր

22 Տե՛ս **Յովհաննէս Հաննայ վրդ.**, նշվ. աշխ., էջ 216:

23 Տե՛ս **Տէր-Յովհաննէսեանց Ա. եպս.**, ժամանակագրական պատմութիւն Սուրբ Երուսաղէմի, հատ. Բ., Յերուսաղէմ, հրատ. «Սրբոց Յակոբեանց», 1890, էջ 535, **Պալեան Տ. վրդ.**, Սուրբ երկիր. նկարագրութիւն սուրբ Երուսաղէմի եւ սրբազան տեղեաց, հատ. Ա., Կ. Պոլիս, հրատ. «Նշան Կ. Պէրպլէրեան», 1892, էջ 155:

24 Տե՛ս **Սաւալանեանց Տ. Հ. Թ.**, Պատմութիւն Երուսաղէմի, հատ. Բ., էջ 1296-1297, տե՛ս նաև **Աղաւունքի Մ. եպս.**, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ, էջ 434-435:

25 Դռան գտնվելու ներկա վայրի վերաբերյալ մեր բազմաթիվ հարցումներն անարդյունք մնացին. մեզ չհաջողվեց ճշտել, թե որտեղ կարող է այն լինել:

Մատուռի ներսում կա երեք խորան. ավագ խորանն ընծայված է սուրբ Հովհաննես ավետարանիչին, ձախինը Աբրահամի և Իսահակի զոհաբերության սեղանն է, իսկ աջինը՝ Քրիստոսի չարչարանքների և կապանքների սեղանը²⁶: Սուրբ Հովհաննես ավետարանիչ մատուռը հիմնականում փակ է այցելուների համար:

3. Եկեղեցու վիմական արձանագրությունները

Ավագ խորանի աջ և ձախ կողմերում կան պատերին ագուցված արձանագիր խաչքարեր: Արձանագիր են նաև ներսում գտնվող սրբապատկերները, եկեղեցական սպասքը, Աբրահամի և Իսահակի զոհաբերության մարմարե սեղանի եզրը: Սույն հողվածում ներկայացնելու ենք միայն վիմական արձանագրությունները, որոնց ընդհանուր թիվը եկեղեցու ներսում 5-ն է: Եվս 3 արձանագրություններ եկեղեցու մուտքի աջ և ձախ սյուներին են: Դրանք բավական վնասված են և դժվարընթեռնելի: Ստորև ժամանակագրական կարգով կներկայացնենք եկեղեցու արձանագրությունները: Նախ տրվում են մուտքի, ապա՝ ներսի գրությունները՝ համապատասխան ծանոթագրություններով: Անվարժ գրությամբ, եղծված և դժվարընթեռնելի արձանագրություններին կցված են նաև դրանց գրչանկարները:

1. Եկեղեցու մուտքի ձախակողմյան սյանը՝ գետնից 140 սմ բարձր. 1623 թ. (նկ. 1)

///[ե]ղ(ի)ցի [տեր՞] ըՄ(տ)[եփանո՞ւս]
տ(եր) ///ր, տ(եր) Մ(ա)րտ
(ի)ր(ո)ս, տ(եր) Ն///ոս///
տեր Նիկ(ո)ղ(ո)ս, [տեր Յա՞]
կոր. թվ(ին) Ռ-ՀԲ. (1623):



Ծնթ.: Հնգատող արձանագրությունը բոլորգիր է՝ փորագրված քարի նակատային մասում: Նկատելի է, որ իբրև «տեր» բառի համառոտագրություն՝ այստեղ գործածված է **տ** տառը՝ պատվի նշանով: Յավոք, արձանագիր հատվածը հողմահարման և ավագաքարի փշրման հետևանքով վնասված է ու դժվարընթեռնելի: Քարի աջակողմյան հատվածը կտորված է, ինչի հետևան-

Վեյ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) Գարի. թիվ 2 (70), ամիլ-հունիս, 2020

²⁶ Տե՛ս Աղանունի Մ. եպս., Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ, էջ 431-432:

քով գրությունն այդ մասերում վնասված է: Առաջին տողի վերջում ընթերցված «ըՍտեփանոս» անունը թեական է:

2. Անվարժ գրություն՝ նախորդից մոտ 30 սմ վեր. անթվակիր (նկ. 2)

Վերասպ



Ծնթ.: Ըստ ամենայնի՝ նոր շրջանի փորագրության փորձ է:

Ընթերցված բառի իմաստն անհասկանալի է: Հնարավոր է, որ հայերեն **Վիրասպ** արական անձնանվան տարբերակներից լինի, թեև «Հայոց անձնանունների բառարան»-ում անվան այդպիսի ձև արձանագրված չէ²⁷:

3. Եկեղեցու աջակողմյան սյանը՝ գետնից 120 սմ բարձր. անթվակիր (նկ. 3)

Ծ/// ՅՈՂԱՆԷՍ ///ԳԵԱՅՈ՛
ԷՆ ///ԷԱՆԱՐԺԱՆՈՎԱԿԻ
///Ր///ԻՆ



Ծնթ.: Արձանագրությունն ամբողջությամբ երկաթագիր է, ընթերցվող հատվածում համառոտագրություններ չկան:

Հողմահարման հետևանքով արձանագրությունը վնասված և դժվարընթեռնելի է: Առաջին տողի սկզբնամասում նշմարվող **Ծ** տառից հետո երևում են **Ա** կամ **Ռ** տառերը հիշեցնող ուրվագծեր: Այդ դեպքում գուցե սկզբի բառը կարելի է վերականգնել իբրև «ԾԱՌԱՅ», այսինքն՝ որպես «ծառայ Աստուծոյ» բառակապակցության բաղադրիչ:

Արձանագրությունից փոքր-ինչ ներքև հագիվ նշմարվում են համեմատաբար նոր շրջանում արված խաչի և տառերի քերծումներ՝ **Կ, Ե**:

Եկեղեցու ներսում.

4. Ագուցված խաչքար՝ ավագ խորանի ստորին աջակողմյան մասում, 30.5 x 26.5 (լայն հատվածում). 1571 թ. (նկ. 4)

27 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 5, Եր., ԵՊՀ հրատ., 1962, էջ 122-123:

ԹՎ(ԻՆ) ՌԻ. (1571)
ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԵՒ ՈՂՈՐ
ՄՈՒԹ(ԵԱՄԲՆ) Զ(ՐԻՍՏՈՍ)[Ի] ԱՄԻՐՊԷԿ[Ս]
ԿԱ(Ն)Կ(Ն)ԵՑԻ Խ(Ա)Չ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ.
ՅԻՇԵՑ(ԷՔ) Ի Զ(ՐԻՍՏՈ)Ս Յ(ԻՍՈՒ)Ս

Ծնթ.: Արձանագրությունը փորագրված է խաչքարի չորս եզրակողերին երկաթագրով: Բացառություն է «խաչ» բառի չ-ն, որը փոքրատառ է: Թվականը փորագրված է խաչքարի վերին հատվածում՝ հիմնական արձանագրության վերին աջ անկյունում, ընդհանուր արձանագրության համեմատ փոքր տառաչափերով: Խաչքարը գրեթե կենտրոնից ճաքած է, սակայն պատի մեջ ազուցված լինելու շնորհիվ ընդհանուր առմամբ անխաթար է:

5. Ազուցված խաչքար՝ ավագ խորանի աջակողմյան մասում, 49 x 27.5. 1655 թ. (նկ. 5)

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ
Յ(ԻՍՈՒ)Ս Զ(ՐԻՍՏՈ)Ս
[Կ]ԱՆԳՆԵՑԻ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ Բ(Ա)ՐԵԽՕՍ Ա[Ո]
Ա(ՍՏՈՒԱ)Ծ Վ(Ա)Ս(Ն) Ծ(=Կ)(Ո)ՂԱԿՑԻ՝ ՄԱՀ(ՏԵՍ)Ի
Յ(Ո)ՎԱՍ(Ա)Փ(Ի)Ն ԵՒ
ԾՆՈՂԱՑՆ՝ ՎՐԳՕԻՆ ԵՒ ԱԼՄՕԻՆ, ԵՒ ԵՂԲ[ԱՐՑ]Ն՝
ՍԱՀԱԿԻՆ ԵՒ ՏԱՏՕԻՆ. Յ[ԻՇԵՑԷՔ]
Ի Տ(Է)Ր. ԱՄԷՆ. ԹՎ(ԻՆ) ՌՃԴ. (1655). ԱՄԷՆ

Ծնթ.: Պատին ազուցված խաչքարի ստորին աջակողմյան մասը փոքրինչ վնասված է, ինչի հետևանքով տվյալ մասում արձանագիր հատվածը դժվար ընթեռնելի է: Արձանագրության 4-րդ տողում առկա է **Ծ** և **Կ** տառերի շփոթ (գրված է «ԾՂԱԿՑԻ»), որը վերծանության ժամանակ ուղղել ենք:

Անսովոր են արձանագրության մեջ հիշատակված **Վրդո**, **Ալմօ** և **Տատո** անձնանունները, որոնք, ըստ ամենայնի, այլ անունների կրճատ տարբերակներ են: **Ալմօ** տարբերակն արձանագրված է նաև «Հայոց անձնանունների բառարան»-ում՝ որպես **Ալմայ** իգական անվան տարբերակ²⁸:

Վրդո և **Տատո** անվանաձևերը հավանաբար կարելի է համարել հայոց մեջ տարածված **Վարդան** և **Տատուր** (**Աստվածատուր** անվան կրճատ ձևերից) անունների տարբերակներ:

6. Աբրահամի և Իսահակի զոհաբերությանն ընծայված փոքր խորանի մարմարե սեղանի եզրին. 1837 թ. (նկ. 6)

28 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, Եր., ԵՊՀ հրատ., 1942, էջ 83:

ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ Գ(=Վ)ԱՅՐԸՍ ՎԱՆ(Ե)ՑԻ ԽԱԶԱՐԻ ՈՐԴԻԴ(=Ք)ԸՆ

ՀԱՃԻ ՍԷՐԳԻՍԸՆ, ՀԱՃԻ ՄԱՐՏԻՐՈՍՆ ԹՎԻՆ 1837

Ծնթ. Երկտող արձանագրությունը երկաթագիր է, բացառություն է միայն յ-ն, որը փոքրատառ է: Առաջին տողում անհասկանալի է «գայրըս» բառը, որում գ-ն հավանաբար վրիպակ է և բառը պետք է ընթերցել «վայրըս»: Դարձյալ առաջին տողում «որդիդըն» բառի մեջ ք-ի փոխարեն սխալմամբ փորագրվել է դ:

Արձանագրության համաձայն՝ պատարագամատույց այս մարմարակերտ սեղանը 1837 թ. նորոգել են հաճի Սերգիսն ու հաճի Մարտիրոսը՝ իրենց հոր՝ Վանեցի Խազարի հիշատակին: **Խազար**-ը Ղազար անվան բարբառային տարբերակներից է՝ քանիցս արձանագրված հայկական գրավոր աղբյուրներում²⁹:

Նկատենք, որ Մ. եպս. Աղավնունու ցանկում գտնում ենք Ղազար վարդապետ Վանցի անունով Սրբոց Հակոբյանց վանքի ոմն միաբանի, որը մահացել է 1814 թ.³⁰: Ցավոք, Աղավնունին լրացուցիչ տեղեկություններ չի հայտնում, և բաց է մնում այն հարցը, թե արդյոք կարելի՞ է նույնացնել այս երկու համանունուն անձանց:

7. Ազուցված խաչքար՝ ավագ խորանի ստորին աջակողմյան մասում, 31 x 25.8. անթվակիր (նկ. 7)

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ

Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս

ԿԱՆԳՆԵՑԱԲ Ս(ՈՒՐ)Բ ԽԱԶՍ Վ(Ա)Ս(Ն) ՓՐԿՈՒԹԵ(Ա)Ն

ՀՈԳՈՑ ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐ(Ի)Ա(Ր)Գ Վ(Ա)ՐԴԱՊԵՏԻՆ

ԵՒ ԱԲՐ(Ա)ՀԱՄ Հ(Ա)ՅՐԱՊԵՏԻՆ, ԾՆ(Ո)ՂԱՅ ՆՈՑԻՆ

Ծնթ. Արձանագրության մեջ հիշատակվող Գրիգոր պատրիարք վարդապետը Գրիգոր Ծիրվանցի Ծղթայակիրն է (1715-1749), իսկ Աբրահամ հայրապետը՝ նույն ժամանակահատվածում միմյանց հաջորդած Աբրահամ Բ Խոշաբեցի (1730-1734) կամ Աբրահամ Գ Կրետացի (1734-1737) Ամենայն հայոց կաթողիկոսներից մեկը: Առավել հավանական ենք համարում, որ խոսքն առաջինի մասին է: Աբրահամ Բ-ն եղել է Գրիգոր Ծղթայակրի մորեղբոր որդին, աշակերտել վերջինիս, մինչև կաթողիկոս օծվելը եղել է Մշո Առաքելոց վանքի

29 Տե՛ս, օրինակ, Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Եր., ԵՊՀ հրատ., 1946, էջ 11936, 12385, 12495:

30 Տե՛ս Աղաւունի Մ. Եպս., Միաբանք եւ այցելութ հայ Երուսաղէմի, էջ 229:

ՎԷՄ ԽԱՄԱՆԱԿՅԱԿՎԱՆ ԽԱՆՈՒԵԱ, ԺԲ (ԺԸ) ՎՊԱՐԻ, ԹԻՎ 2 (70), ԱՊՐԻԼ-ԻՈՒՆԻՍ, 2020

առաջնորդ, ապա՝ Տարոնի Սուրբ Կարապետ վանքի վանահայր³¹: Պատմական անցքերի և անձանց մասին հիշատակումներով հարուստ Երուսաղեմի Հ^մ 532 ձեռագրում Աբրահամ Բ Խոշաբեցի կաթողիկոսի մահվան առթիվ կա հետևյալ գրանցումը. «Աստուած ողորմի սրբազան Հայրապետիս մերոյ տեառն Գրիգորի արեւակից եւ ազգային Սուրբ Էջմիածնի կաթողիկոս ի Քրիստոս հանգուցեալ Աբրահամ ծայրագոյն հայրապետին»³²: Աբրահամ Խոշաբեցի կաթողիկոսը մահացել է 1734 թ. և ամփոփվել Սուրբ Գայանեի բակում³³: Գրիգոր Շղթայակիի պատրիարքը մահացել է 1749 թ.՝ ամփոփվելով Երուսաղեմի Սուրբ Փրկիչ հայոց վանքում³⁴:

Նկատի ունենալով այս ամենը, ինչպես նաև արձանագրության ոճը, տառաձևերը և քանդակագարդ խաչքարի հարդարանքը՝ անթվակիր այս խաչքարը թվագրում ենք ԺԸ դարով:

8. Ազուցված խաչքար՝ ավագ խորանի ստորին ձախակողմյան մասում, 32.5 x 18.3 (նախնական չափսը՝ 32.5 x 20). անթվակիր (նկ. 8)

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ
Յ(ԻՍՈՒ)Ս ԶՐ(ԻՍՏՈՍ)
Կ(ԱՆ)ԳՆԵ]ՑԻ Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ Բ[ԱՐԵԽ]
ՕՍ Ա[Ո] Ա(ՍՏՈՒԱ)Ծ Վ(Ա)Ս(Ն)///
///ՀՐ///
///Ե///



Ծնթ.: Խաչքարը խիստ վնասված է, ունի բազմաթիվ ճաքեր: Աջակողմյան ստորին մասը կտրտված է, ինչի հետևանքով վնասված կամ դժվարընթեռնելի է նաև արձանագրությունը:

31 Տես Աղանունի Մ. եպս., Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղեմի, էջ 6, Օրմանեան Մ. արք., Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը հարակից ազգային պարագաներով պատմուած, մասն Բ, Կոստանդնուպոլիս, հրատ. «Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան», 1912, սյուն 2872-7873 (§1965):
32 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. 2, կազմեց Պողոտեան Ն. եպս., Երուսաղեմ, հրատ. «Սրբոց Յակոբեանց», 1967, էջ 538:
33 Յավոք, կաթողիկոսի տապանաքարը չի պահպանվել, և 1960-ական թթ. Վազգեն Ա կաթողիկոսի հրամանով նորն է տեղադրվել (տես Հարությունյան Ա., Վաղարշապատ. վանքերը և վիճակն արձանագրությունները, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2016, էջ 308):
34 Գրիգոր Շղթայակիի և նրա գործունեության վերաբերյալ մանրամասն տես վերջերս լույս տեսած հետևյալ ուսումնասիրությունը Պողոտեան Ն., Գրիգոր Շղթայակիի Պատրիարք, Երուսաղեմ, տպ. «Սրբոց Յակոբեանց», 2017:

Արձանագրության գիրը կանոնավոր երկաթագիր է, տողերը միմյանցից անջատված են միջտողային արտահայտված գծերով: Խաչքարի զարդանախշերի և արձանագրության ոճից ելնելով՝ կարծում ենք, որ այն կարելի է թվագրել ԺԸ դարով:

Այսպիսով՝ ներկայացված թվով 8 արձանագրությունները, որ հրատարակվում են առաջին անգամ, հիմնականում ուշ միջնադարում հայ ուխտավորների թողած քարե հիշատակարաններ են՝ ի նշան առ Աստված հնչեցրած իրենց աղոթքների և հոգեփրկչական սպասման:

Մայրլ Է. Սթուն - Երուսաղեմի Եբրայական համալսարանի պրոֆեսոր, հայագետ: Երկար տարիներ զբաղվել է հայագիտական տարբեր հարցերի ուսումնասիրությամբ, մասնավորապես նրա ուշադրության կենտրոնում են եղել պարականոն գրականությունը, հայ-հրեական առնչությունները, հայկական հնագրությունը, ինչպես նաև վիմագրությունը: Այս թեմաներով հրատարակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ:

Էլեկտրոնային հասցե՝ michael.stone@mail.huji.ac.il

Խաչիկ Ա. Հարությունյան - Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, ձեռագրագետ: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց ձեռագրական և վիմագրական ժառանգությունը՝ իր տարաբնույթ դրսևորումներով: Հետազոտությունները հիմնականում առնչվում են գրավոր այդ սկզբնաղբյուրներին, դրանց լեզվական, հնագրական և ոճական առանձնահատկություններին:

Էլեկտրոնային հասցե՝ khachik.har@gmail.com

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի, թիվ 2 (70), ամբի-հունիս, 2020

Summary

THE ARMENIAN INSCRIPTIONS OF THE CHURCH OF HOLY SEPULCHRE IN JERUSALEM

Part 1. The Chapel of John the Evangelist and Its Inscriptions

Michael E. Stone (Jerusalem)

Member of Israel Academy of Sciences and Humanities

Khachik A. Harutyunyan

Candidate of Sciences in Philology

Key words - Jerusalem, Christianity, Armenian Patriarchate, sanctuaries, monasteries, pilgrims, manuscript, inscription, colophon.

Over the centuries the Holy Sepulchre has been and continues to be one of the main sanctuaries of the Christian world up to our days. Armenians and other Christian peoples have visited this Basilica, renewed their vow with God, obtained new holy places, extended or lost them, celebrated holy masses there, and copied manuscripts. Indeed, in the colophons of some Armenian manuscripts it is possible to see the Holy Sepulchre as a place of copying. With the hope of leaving their names in the book of life and being mentioned in future (this phenomenon is well-known and widespread in the colophons of the Armenian manuscripts) the Armenian pilgrims have engraved numerous graffiti in the different sites in the complex forming the Church of the Holy Sepulchre.

In this series of articles, we present the Armenian inscriptions of the Holy Sepulchre. In the first part we present one of the Armenian sites of the Holy Sepulchre – the Chapel of John the Evangelist and its inscriptions. The chapel is located in the eastern part of the courtyard of the Church of the Holy Sepulchre. Rev. John Hannah (Hovhannes Hanna), a well-known scholar of Jerusalem's history, writes that the chapel was built in the same place where, according to legend, John the Evangelist and the Mother of God stood during the crucifixion of Christ (John 26:26-27). There is no information about the date of construction of the chapel, but it was probably built

Վէր համահայկական հանրես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 2 (70), ամսիկ-հոկտեմբեր, 2020

before the 6th CE century, as it is mentioned in the famous “List” of Anastas Vardapet, who presumably visited the Holy places in the middle of the 6th century.

In total, we have managed to find 8 inscriptions there, 5 of which are in the Chapel, and the other 3 are graffiti incised at the entrance of the Chapel.

Резюме

АРМЯНСКИЕ НАДПИСИ ХРАМА ГРОБА ГОСПОДНЯ В ИЕРУСАЛИМЕ

Часть 1. Часовня Иоанна Богослова и ее надписи

Майкл Э. Стоун (Иерусалим)

Член Израильской академии наук

Хачик А. Арутюнян

Канд. фил. наук

Ключевые слова - Иерусалим, христианство, Армянский патриархат, святилища, монастыри, паломники, рукопись, надпись, колофон.

На протяжении веков храм Гроба Господня был и остается до наших дней одним из главных святилищ во всем христианском мире. Среди других христианских народов армяне также посещали это святилище, обновляли свои клятвы перед Богом, теряли или приобретали новые святые места, расширяли их, праздновали там святые литургии и копировали рукописи. Действительно, в колофонах некоторых армянских рукописей можно увидеть храм Гроба Господня как место копирования рукописей.

В то же время, в надежде оставить свои имена в книге жизни и быть упомянутыми в будущем (это явление хорошо известно и широко распространено в колофонах армянских рукописей), армянские паломники оставляли многочисленные граффити или различные надписи на разных местах комплекса, образующего храм Гроба Господня.

В этой серии статей мы представляем армянские надписи Святого храма. В первой части мы представляем один из армянских участков храма Гроба Господня - Часовню Иоанна Богослова и ее надписи. Часовня расположена в восточной части двора храма Гроба Господня. Преподобный Иоанн Ханна (Hovhannes Hanna), известный знаток истории Иерусалима, пишет, что

Հէս հանձնախղիւղիւան հանրելու, ժԲ (ժԸ) Գրառի. ԹԻԿ 2 (70), ամբողջական, 2020

часовня была построена в том же месте, где, согласно легенде, евангелист Иоанн и Богородица стояли во время распятия Христа (Иоанна 26:26-27). Информация о дате постройки часовни отсутствует, но, вероятно, она была построена до 6-го века нашей эры, так как упоминается в знаменитом «Списке» Анастаса Вардапета, который предположительно посетил святые места в середине 6-го века.

В общем счёте нам удалось зафиксировать там 8 надписей, 5 из которых находятся в часовне, а остальные 3 надписи на стенах, вырезанные у входа в часовню.

REFERENCES

1. **Achařean H.**, Hayots' andznanunneri bařaran, hat. 1, Yer., YePH hrat., 1942 (**In Armenian**).
2. **Achařean H.**, Hayots' andznanunneri bařaran, hat. 3, Yer., YePH hrat., 1946 (**In Armenian**).
3. **Achařean H.**, Hayots' andznanunneri bařaran, hat. 5, Yer., YePH hrat., 1962 (**In Armenian**).
4. **Aghawnuni M. yeps.**, Haykakan hin vank'er yew yekeghets'iner Surb yerkrin mēj. usumnasirut'yunner, Yerusaghēm, "Srbots' Yakobeants'" hrat., 1931 (**In Armenian**).
5. **Aghawnuni M. yeps.**, Miabank' yew ayts'eluk' hay Yerusaghēmi, Yerusaghēm, "Srbots' Yakobeants'" hrat., 1929 (**In Armenian**).
6. **Alpōyachean A.**, Patmut'iwn hay gagh'takanut'ean. hayeru ts'ruumē ashkharhi zanazan maserē (skizbēn minch'ew ZhA. dar K'ristosi), Gahirē, tp. "Sahak Mesrop", 1941 (**In Armenian**).
7. **Anastas vardapet Herapolsets'i**, Vasn vanorēits', vor I surb k'aghak'n Yerusaghēm, bnagirē kazmets' **Ch'obanean P.**, "Matenagirk' Hayots'", hat. Ye., Ē. dar, Ant'īlias-Libanan, 2005 (**In Armenian**).
8. **Ch'obanyan P.**, Anastas vardapeti kazmats Yerusaghemi haykakan vank'eri ts'uts'aki zhamanaki harts'i shurj, "Patma-banasirakan handes", Yer., 2001, N 1 (**In Armenian**).
9. **Ghazarean G.**, Kiwregh Skiwt'apolsets'u teghekt'iwnnerē 5-6-rd dareri Paghestini hay vanakanneri masin, "Haykazean hayagitakan handēs", Pēyruť, 2019 (**In Armenian**).
10. **Harut'yunyan A.**, Vagharshapat. vank'erē yev vimakan ardzanagrut'yunnerē, S. Ējmiatsin, Mayr At'oř Surb Ējmiatsni hrat., 2016 (**In Armenian**).
11. **Harut'yunyan Kh. A.**, Hayeren dzeragreri hishatakarannerē, Yer., "Matenadaran", 2019 (**In Armenian**).
12. **Palean T. vrd.**, Surb yerkir. nkaragrut'iwn surb Yerusaghēmi yew srbazan tegheats', hat. 1, K. Polis, hrat. "Nshan K. Pēpērean", 1892 (**In Armenian**).
13. **Petrosyan H.**, Khach'k'arē yev hishataki mijnadaryan ēnkalumē, "Hayots' patmut'yan harts'er" gitakan hodvatsneri zhoghovatsu, 6, "Mesrop ark'. Ashchean matenashar", Yer., 2005 (**In Armenian**).
14. **Pogharean N. yeps.**, Mayr ts'uts'ak dzeragrats' Srbots' Yakobeants', hat. 2, Yerusaghēm, "Srbots' Yakobeants'" hrat., 1967 (**In Armenian**).
15. **Pōghosean N.**, Grigor Shght'ayakir Patriark', Yerusaghēm, "Srbots' Yakobeants'" hrat., 2017 (**In Armenian**).
16. **Purchēk'ean B. vrd.**, Hin khach'k'areru yaytnaberum Srbots' Yakobeants' mayr tacharin mēj, "Sion", 2015, N 10-12, (**In Armenian**).

17. **Sargisean h. B. v.**, Mayr ts'uts'ak hayērēn dzeragrats' Matenadaranin Mkhit'areants' I Venetik, hat. 2, Venetik, 1924 (**In Armenian**).
18. **Sawalaneants' T. H. T'.**, Patmut'iwn Yerusaghēmi, grabar bnagrēn ashkharhabari veratsets' Nshanean **M. yeps.**, hat. 1-2, Yerusaghēm, "Srbots' Yakobeants'" hrat., 1931 (**In Armenian**).
19. **St'oun M. Ye.**, Hingerord daru hayeren vimagrut'yunner Nazaret'en, "Patma-banasirakan handes", Yer., 1990, N 3 (**In Armenian**).
20. **St'oun M. Ye.**, Yerusaghemi noragyut hayeren ardzanagrut'yunnerē, "Patma-banasirakan handes", Yer., 1993, N 1-2 (**In Armenian**).
21. **Tēr-Yovhannēseants' A. yeps.**, Zhamanakagrakan patmut'iwn Surb Yerusaghēmi, hat. 2, Yerusaghēm, "Srbots Yakobeants'" hrat., 1890 (**In Armenian**).
22. **Yovhannēs Hannay vrd.**, Girk' patmut'ean srboy yew metsi k'aghak'is Astutsoy Yerusaghēmis yew srbots' tnōrinakanats' tegheats' Tearn meroy Yisusi Qristosi, K. Polis, "Yovhannēsi yew Pōghosi" tp., 1782 (**In Armenian**).
23. **Yovsēp'ean G. vrd.**, Grch'ut'ean aruestē hin hayots' mēj, masn G., K'artēz hay hnagrut'ean (hay gri giwti 1500 ameaki art'iw), 95 takhtakov, Vagharshapat, Yelek'trasharzh tp. S. Ējmiatsni, 1913 (**In Armenian**).



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5

Վեմ համահայկական հանդես, ժԲ (ժԸ) Գարրի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8

Վեմ համահայկական հանդես, ժԲ (ժԸ) տարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020